

ԳՆՈՒԿ-ԲՈՒՈՐԱՆՔԻ ՎԱՆՔԸ

Գ. Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

Գնուկի վանքը գտնվում է Հրազդանի շրջանի (պատմական Վարաժնունիք դավառի մի մասը) Արզական գյուղից 3—4 կմ հյուսիս-արևմուտք, Երկու ու մեծ սարերի միջև ձգվող ձորի վերին մասում, խիտ անտառի մեջ (նկ. 1)։ Երբեմնի փարթամ վանական համալիրից պահպանվել է միայն կիսավեր մի եկեղեցի։ Կանգուն են շուրս պատերը՝ մոտ 3,5 մ բարձրությամբ։ Եկեղեցին դույզ որմնամույթներով զմբեթասրած է։ Այն երեք կողմից, բացի հյուսիսայինից, խաչմուտք է հողի և քարակույտերի մեջ։ Թափված քարերն այնքան շատ են, որ կարելի է դրանց մի մասը վերադարձնել մեկ այլ շինություն։ Միակ մուտքը արևմտյան կողմից է, վերևում ունի կանաչադեղնավուն շարվածք, որը նստած է մուտքի կողքերը եղրագող երկնիստ որմնասյուների վրա։ Մույթները մասնատում են եկեղեցու ինտերիերը, արևմտյան կողմում ստեղծելով նախասրահի տպավորություն։ Որմնամույթերը վերևից ավարտվում են ուղղանկյուն խոյակներով, որոնք թեթևակի զարդարված են։

Ընդհանրապես եկեղեցին զուրկ է քանդակազարդումներից, չհաշված վերոհիշյալ պարզագույն ձևերը։ Արևելյան կողմում կիսաշրջանաձև խորանն է իր բեմով։ Բեմի երկու կողմերում գտնվում են ցուր մուտք ունեցող ավանդատները, որոնք արևելյան կողմից ունեն զեպի դուրս բացվող պատուհաններ։ Բեմի շարվածքը սկզբնական չէ, կառուցված է խաչքարերի բեկորներով։ Պատուհաններ կան նաև հյուսիսային պատին և խորանի կենտրոնում։ Խորանի կիսաշրջանաձև շարվածքի մեջ բացված են երկու որմնախորշեր, որոնք ծառայել են որպես սրբատեղեր։ Եկեղեցին սալաատակված է եղել, իսկայն պահպանվել է սալաքարերի մի մասը։

Եկեղեցու հյուսիս-արևելյան կողմում կողք-կողքի շարված են խաչքարերի պատվանդաններ, իսկ նրանց առջև ամբողջական և կտրված խաչքարեր են թափված։ Սրանք աչքի են ընկնում հստակ մշակման տեխնիկայով և բուսական ու երկրաչափական տարատեսակ զարդաքանդակներով։ Առանձնապես ուշադրություն է գրավում ոճավորված խաչերով քանդակազարդված խաչքարի պատվանդանը։

Վանքը ունեցել է նաև գերեզմանոց, որը գտնվում է հուշարձանից մոտ 0,5 կմ հյուսիս-արևելք, սարավանդի վրա։ Գերեզմանոցի կենտրոնական հատվածում նշարվում են շինությունների հետքեր։ Հավանաբար դրանք մատուռի մնացորդներն են։ Այստեղ կանգնած և ընկած են երկու տասնյակից ավելի խաչքարեր և մոտ երեք տասնյակ տարբեր ձևերի տապանաքարեր։ Ուշագրավ են խաչքարերի զարդարանկարչին մոտիվները։ Գնուկի և նրա շրջակա Բեդենյաց վանքի, Նեղուցի, Չորոտի, Բջնի, Մայրավանքի, Մաքրավանքի ու մյուս միջնադարյան հուշարձանների խաչքարերի, ինչպես նաև ճարտարապետական որոշ մանրամասների ուշադիր քննությունը թույլ է տալիս խոսելու քանդակազորական մի ուրույն դպրոցի մասին։ Խաչքարային արվեստի փայլուն նմուշներից են անանուն քանդակազործ-վարպետի կիրառած երեք խաչքարերը, որոնք կանգնեցված են հիշյալ տաքածքում՝ Թեդենյաց վանք, Բջնի և Աղվերան2։ Հնայած ալյուրե կոթողները շունեն վկայագրեր, ալյուրե հանգրձան, դրանք նույն վարպետի տաղանդի արգասիք են, քանի որ իրենց ոճով, քանդակազարդչին մոտիվներով և կատարման տեխնիկայով համարյա կրկնում են միմյանց։ Որոշակի նմանություններ կան Մայրավանքի, Մաքրավանքի, Նեղուցի խաչքարերի մեջ, որոնք, չնայած համեմատաբար պարզ ոճավորման, աչքի են ընկնում քանդակման բարձր տեխնիկայով։ Կարելի է բավական ակնհայտ զուգահեռներ տես-

1 Վանքի անունը առաջացել է համանուն տեղանքից։ Դնուկ Արարատյան և Շիրակի բարբառներում նշանակում է «փարախ, ոլխարների գոմ» (Հայոց բառ ու բան, աշխատասիրեց Ստահան Վարդապետ Ամատունի, Վաղարշապատ, 1912, էջ 145)։

2 Թեդենյաց վանքի խաչքարը (ստորին մասը կտրված) գտնվել է վերջերս, պեղումների ժամանակ։ Բջնի խաչքարը ագուցված է վանքի զանգակատան արևմտյան պատի մեջ, իսկ Աղվերանի կանգնեցված է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հանգստյան տան բակում։

նեւ թեղենյաց վանքի, Բշնիի և Կեչառիսի կոթողներում: Իհարկե, նշված վայրերում կան նաև ընդհանուր նկարագրից շեղվող նմուշներ. օրինակ, հենց Գհուկի վանքում:

Գհուկի վանքը հայկական հուշարձանների մեջ թերևս ամենաբիշ ուսումնասիրվածներից է. Դրա պատճառը նախ և առաջ նրա կտրվածությունն է բնակավայրերից և ճանապարհներից: Մատենագրության մեջ իսպառ բացակայում են հիշատակությունները հուշարձանի մասին, թեև ժամանակին այն բավական մեծ է Լղել, ունեցել է ստվար վանական միաբանություն, ստացել



Նկ. 1

է կալվածքներ և այլ բնույթի նվերներ: Վանքի գործունեության, նրա դերի, նվիրատուների և այլ հոգևոր, անսլալման նաև մշակութային օջախի հետ կապված գտնադան այլ հարցերի մասին պատկերացում ենք կազմում միայն վիմագրերի շնորհիվ:

Տարածքը, որտեղ գտնվում է հուշարձանը, նախկինում մտել է Նիգ գավառի մեջ: X դարում այս շրջանի տեր են դառնում Պահլավունիները, իսկ XII դարի վերջերին արդեն Զաքարյան իշխանության սահմաններում էր:

1201 թ., ռազմական ծառայությունների համար, Զաքարյանները Բշնին իր շրջակայքով և Կեչառիսը նվիրում են հաղթական Վասակ իշխանին, որը նոր էր տեղափոխվել հայրենի խաչեն գավառից: Այդպիսով, նշված տարածքները դառնում են հաղթականների ժառանգական սեփականությունը: Գհուկի վանքը աշխարհագրական տեսակետից մտնում էր Բշնիին հյուսիս-արևմուտքից հարող շրջանի մեջ և պատկանում էր Բշնիի եպիսկոպոսական թեմին: Այստեղից կարող ենք ենթադրել, որ մեզ հետաքրքրող վանքը մտել է հաղթականների տիրույթների մեջ և հանդիսացել նրանց հոգևոր և մշակութային հաստատություններից մեկը: Այս կապակցությամբ միանգամայն օրինալափ է Պոռ խաղբակյանի շատ կարևոր նվիրատվական արձանագրությունը, փորագրված եկեղեցու պատին:

Գհուկի եկեղեցին չափազանց հարուստ է վիմագիր արձանագրություններով: Դրանք փորագրված են հուշարձանի ներսի բոլոր պատերին, որմնամույթերի կողերին, ավանդատների մուտքերի վերնամասում: Խիստ ուշագրավ է խորանի կիսաշրջան սյուստը գոտեղորոշ ծավալու՜ն արձանագրությունը: Արևելյան պատը արտաբոստ նույնպես ամբողջությամբ պատված է արձանագրություններով: Եկեղեցու շրջակայքում կան մի քանի արձանագրված խաչքարի պատվանդաններ: Ամբողջ տարածքում հաշվվում են մոտ երեք տասնյակ արձանագրություններ: Որոշ բոլորը աչքի են ընկնում խիստ վայելչադիր տառաձևերով: Արձանագրությունների ճշն-

շող մեծամասնությունը թվագրված է, որով էլ ավելի է բարձրանում դրանց պատմական արժեքը որպես սկզբնաղբյուրներ:

Վիմագրերը հիմնականում նվիրատվական են, միայն երեքն են հիշատակագրային: Վանքին նվիրվել են գյուղ, հողամասեր, աշխեր, դանգ, ձեռագրեր, եկեղեցական սպասք ու սրբազան մասունքներ, զրամով օգնել են շինարարությանը: Արձանագրություններում հիշատակված են ժամանակի մի շարք նշանավոր դեմքեր՝ Պռոշ հաղբականը, Բջնիի Գրիգոր վարդապետ վանահայրը, Պիշար իշխանը և այլք: Վկայված են շատ սակավ հանդիպող անձնանուններ. օրինակ՝ Մելեք, Ազգեր, Ալամ, Իշխանտիկին, Պիշար:

Ներկայացնում ենք հուշարձանի արձանագրություններից ութը, որոնք իրենց բնույթով և բովանդակությամբ կարևոր են վանքի պատմության հետ կապված որոշ հարցերի լուսաբանման տեսակետից:

1. Եկեղեցու: Հյուսիսային պատին, ներքուստ, պահպանվել է մի հողմահարված արձանագրություն, համաձայն որի ոմն Քույրիկ օգնել է եկեղեցու շինարարությանը: Արձանագրությունը երկտող է, շնայած վատ պահպանվածությանը, այն գրեթե ամբողջությամբ վերծանվում է:

1 ՇՆՈՐՀԻՆ ԱՅ, ԵՍ՝ ՔՈՅՐԻԿՍ ԷՏՈՒ Զ ...ՈՅՍ ԻՄ Ի ՇԻՆՈՒ

2 ԹՆ ԷԿԵՂԷՑՈՅՍ և ԱՌԻ :Ա: ԺԱՄ ՆՈՐ ԿԻՐԱԿԷԻՆ:

2. Քույրիկի մեկ այլ արձանագրություն կարգում ենք արևմտյան պատին, մուտքի վերին աջ անկյունում: Այն բաղկացած է հինգ տողից: Վիմագրի սկզբնամասերը պարունակող բարձր կանգն է, սակայն բովանդակությունը պարզ է:

1 [ՇՆՈՐՀԻՆ ԱՅ], ԵՍ ՔՈՅՐԻԿՍ

2 [ԷՏՈՒ ԶԱՐԴԻՆՍ Ի ՇԻՆՈՒԹԻ ԷԿ

3 [ԵՂԷՑՈՅՍ ԵՒ ՍՊԱՍԱՒՈՐՔՍ ԿԱՐԳ

4 [ԵՏԻՆ Ի ՏԱՐԻՆ] ԱԻՐ ԺԱՄ ԶԿՆԻ

5 ԶԱՏԿԻՆ (նկ. 31):

Գույրիկ անձնանունը հայ վիմագրության մեջ շատ հազվադեպ է հանդիպում: Այդ անունից են առաջացել նաև Քույրածայրը³, Քույրոցը⁴: Քույրիկ անձնանվանը հանդիպում ենք նաև Կղեզնաձորի շրջանի Վերին Ուլգյուր գյուղատեղում կանգնեցված խաչքարի արձանագրության⁵, Բագնայրի մի վիմագրի⁶ և վերջերս Դվինի պեղումներից հայտնաբերված XIII դարի տապանաքարի արձանագրության⁷ մեջ: Չնայած սակավ հանդիպող այս անվանը, դժվարանում ենք որևէ մեկին նույնացնել Գույրիկ վանքի Քույրիկի հետ:

3. Արձանագրությունը փորագրված է հյուսիսային ավանդատան մուտքի վերևում, բաղկացած է ութ տողից: Չնայած առաջին և երկրորդ տողերի վերջնամասում մի քանի տառեր կոտորված են, իսկ 6—8-րդ տողերի սկզբնահատվածները հողմահարված՝ արձանագրությունը հիմնականում վերծանվում է.

1 ԿԱՄԱԻՆ ԱՅ, ԵՍ ՏՈՒՐՔՍ, ՈՐԴԻ ՍՄՐՅԱ

2 ՏԱ, ՍՆՈՒՅԱՍ ԱԹԱՊԱ[Կ]ԻԻ

3 ԱՆԷԻ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ԳՈՂԱՐԽԱԹ

4 ՈՒՆ, ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՍՐ ՈՒՆՏԻՍ ԵՒ ՏՎ

5 ԱՔ ՄԵՐ ԶԱԼԱԼ ԸՆԶԻՑ: [ԵԻ] ԱՌԱՋՆՈՐԴ

3 Դիվան հայ վիմագրության. պր. 3, կադմեց՝ Ս. Գ. Բարխուդարյան. Երևան, 1967, էջ 16, արձ. 12:

4 Դիվան հայ վիմագրության. պր. 4, կադմեց՝ Ս. Գ. Բարխուդարյան. Երևան, 1973, էջ 177, արձ. 303:

5 Դիվան հայ վիմագրության. պր. 3, էջ 38, արձ. 95:

6 Վիմական տարեգիր, կադմեց՝ Կ. Կոստանյան. Պետերբուրգ, 1913, էջ 225, արձ. 26:

7 Ա. Ժամկոչյան. Դվինի միջնաբերդի հարավային բուրգի 1977—78 թթ. պեղումները.— Հայկական ՍՍՀ-ում 1977—78 թթ. դաշտային հնագիտական աշխատանքներին նվիրված զեկուցումների թեզիսներ. Երևան, 1979, էջ 31:

Handwritten text in a medieval script, likely Gothic or similar, arranged in several lines. The text is somewhat faded and difficult to decipher, but appears to be a continuous passage.

Handwritten text in a medieval script, likely Gothic or similar, arranged in several lines. The text is somewhat faded and difficult to decipher, but appears to be a continuous passage.

Handwritten text in a medieval script, likely Gothic or similar, arranged in several lines. The text is somewhat faded and difficult to decipher, but appears to be a continuous passage.

6 Ք ՍՈՐԱ ԵՏՈՒՆ Ի ՏԱՐԻՆ :Բ: ԺԱՄ ՍԱՌԶԱԼԻՐԱՐ

7 ԻՆ :Ա: ԱԻՐ ԻՆԶ, :Ա: ԱԻՐ ԳՈՂԱՐԽԱԹՈՒՆ

8 [ԻՆ:ՈՎ] Խ[Ա]ՓԱՆԷ, ԴԱՏԻ Ի ՏԷ ԱՅ, ԹՎ ՈԶԹ (1240) (նկ. 2, նկ. 32):

Սմբատի որդի Տուրքը այլուստ հիշատակություններ չունի: Տուրքը որպես անձնանուն լայն հիրառություն չի ունեցել: Այս անվան փաղաքական ձևն է Տուրքիկը, որի միայն երկու հիշատակություն կա, մեկը Հաղարծինում⁸, մյուսը՝ Թեղենյաց վանքում⁹:

Արձանագրության մեջ Տուրքը իրեն համարում է «սնուցած աթապակ ԻԻԱՆԷԻ»: Այս երեք-վոյթը միջնադարյան Հայաստանում բավական տարածված է եղել, «սնուցիլն» նշանակում է «մեծցնել, կերցնելով պահել, կրթել զապակը, սանը»¹⁰: Ավելի հաճախ այդ դերում հանդես էին գալիս խոշոր իշխանական տների ներկայացուցիչները:

4. Վիմագրիը փորագրված է աջ ավանդատան մուտքի վերևում: Արձանագրության առաջին տողերն ընդգրկող քարերն ընկած են. բաղկացած է եղել 15—16 տողից: Պահպանված առաջին երեք տողերի վերջնամասերը հողմահարված են, սակայն ամբողջությամբ վերականգնվում են: Այդ վիճակում են նաև նախավերջին և վերջին տողերի որոշ հատվածներ: Արձանագրության սկիզբը մերականգնված է պայմանականորեն՝ հիմնվելով հեղինակի մյուս հայտնի վիմագրերի վրա:

: [Ի ԹՈՒԻՍ, Ի ՏԵՐՈՒԹԵՆ ԲԱՐԵՊԱՇՏ]

2 [ԱՇԱՍԷՐ ԹԱԳԱԴՐԻՆ ՎՐԱՅ՝ ԱԻԱԳԻՆ ԵԻ]

3 [ՇԱՀ]ԱՆՇԱՀԻ, ԵՍ ՊԱՌՇ, ՈՐԴԻ [ՎԱ]

4 ՍԱԿԱ ԻՇԽԱՆԻՆ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ [Խ]

5 ՈՒԹ[ԼՈՒ] ԽԱԹՈՒՆԻ, ՄԻԱԲԱՆԵՑԱ [ՄԲ]

6 ՈՒԽՏԻՍ ԵՒ ՏՎԻ ԳԵՂՋ ԱՆԱՊԱՏՆ

7 ԻՐ ԿՈՊԱՐՈՎՆ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴ

8 Ք ՍՈՐԱ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ Ի ՏԱՐԻՆ

9 :Ի: ԱԻՐ ՊԱՏԱՐԱԴ ԻՆԶ, ԵԹԷ Ո

10 Ք ԽԱՓԱՆԷ ԿԱՄ ԽԼԵԼ ԶԱՆԱ Ի ՄԵՐ

11 ՈՑ ԿԱՄ ԱԻՏԱՐԱՑ ԶԳԵՂՆ, ՆՋՈՎ

12 ԵԼ ԵՂԻՑԻ ՅԺԸ ՀԱՅՐԱՊԵՏԱ

13 ՑՆ: ԵՒ ՏՎԱՔ ԱՆԱՊԱՏԵՑԻ Շ

14 ԻՆԱԿԱՆ ԶԳՐԻԳՈՐԱ ՈՐԴԻՔՆ:

15 ԶՄԽԻԹԱՐ..... (նկ. 34):

Արձանագրությունը Բվագրվում է XIII դարի 40-ական թթ.: Հիշատակված է ժամանակի նշանաձոր իշխաններից մեկը՝ Պոռ խաղբակյանը: Նա իր կնոջ՝ Խուժիլուխաթունի հետ վանքին նվիրում է Անապատ գյուղը իր բոլոր սահմաններով և նույն գյուղից Գրիգոր շինականի ոռոգիներին: Այստեղ վկայված է վանական հաստատությանը գյուղ և շինական նվիրելու ուղարկվ փաստը: Անապատ գյուղի տեղագրությունը դժվարանում ենք որոշել, չնայած այդ անվամբ գյուղեր հիշատակված են աղբյուրներում¹¹: Վերջում, հավանաբար, նշված է արձանագրությունը փորագրող գործի՝ Մխիթարի անունը:

5. Արձանագրությունը փորագրված է եկեղեցու ներսում, հյուսիսային պատին, պատուհանի տակ, ձախ կողմից, ունի 6 տող: Պահպանվածությունը գերազանց է և ըստ այդմ էլ լիարժեք վերանվում է:

1 Ի ԹՈՒԻՍ :ՈՂԹ (1250): ԿԱՄԱԻՆ ԱՅ, ԵՍ ԹՈՒՍՈՒԹ


2 ԱՆՍ, ԴՈՒՍՏՐ ՎԱՍԱԿԱ, ՈՐԴՈ ՎԱԽՏԱՆԳԱ ՏՆ

8 Դիվան հայ վիմագրության. պր. 6, կաղմեցին՝ Ս. Ա. Ավագյան և Հ. Ս. Զանդուկյան. Երևան, 1977, էջ 26, առձ. 32:

9 Է Ի Բ ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց Ի. Պատմություն Հայոց. Երևան, 1961, էջ 171:

10 Հ ր. Ա ձ ա ո չ ա ն. Հայերեն արձատական բառարան. հ. 4, Երևան, 1979, էջ 251:

11 Հայկական Սովետական Հանրագիտարան. հ. 1, Երևան, 1974, էջ 367:



նկ. 3

3 ԽԱԶԻՆՈՒ, ԳՆԵՑԻ ԶԶԻԹԵՆՆԱՅ ԱՅԳՈՅՆ Զ

4 ԱՐԵՔՆ, Ի ՍԲ ՈՒԽՏԱ ԵՏՈՒ ԵՒ ՍՊԱՍԱՌՈՐՔ ՍՈՐԱ ԵՏ

5 ՈՒՆ Ի ՏԱՐԻՆ :Ա: ԱԻՐ ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱԻՆԻ ՏՆԸՆԴԱՌ

6 Ա.ԶԻՆ, ՈՐ ԽԱՓԱՆԷ ԴԱՏԻ ՅԱՅ (նկ. 3):

Արձանագրությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում նախ և առաջ նրա մեջ նշված անձանց ինքնությունը արագելու տեսակետից: Եթե Վախտանգի թոռ Ռուզուբանը XIII դարի կեսերի անձնավորություն է, պարզ է, որ նրա պապը ապրած ոչ չէր լինել XII դարի երկրորդ կեսում: Այժմ տեսնենք, թե ով կարող էր լինել այս «Խաչենի տէր» հորջորջված Վախտանգը: Մատենագրական և վիժապրական աղբյուրներից հայտնի են երեք անձինք, որոնք կարող են առնչվել խնդրո առարկա հարցի հետ: Առաջինը Հասան-Ջալալի հայր Վախտանգ Տանգիկն է, մահացած 1214 թ.: Այս նույնացումը համոզիչ կլիներ, եթե մտածեինք, որ Հասան-Ջալալը մի էրրորդ անուն էլ է ունեցել՝ Վասակ (կրկնանունները Խաչենում բավական տարածված էին), մահավանդ որ Հասան-Ջալալն ունեցել է Ռուզուբան անունով աղջիկ, որն ապրել է XIII դարի 50—60-ական թթ.: Մյուսը՝ Հաթերքի Ջյուլից Վախտանգ իշխանաց իշխանն է, Հասան կրոնավորյալի որդին, որի Վասակ անունով որդի, սակայն, աղբյուրներում չի հիշատակված: Թերևս հնարավոր է, որ նա ունեցած լինի ցարդ անհայտ մի որդի Վասակ անունով, որի գույտը Ռուզուբանը, այցելելով իրենց ազգակից հաղբակյաններին, նրանց տիրույթներում գտնվող վանքին՝

նվիրատվություն է կատարել¹²։ Եվ վերջապես, ենթադրելի է նաև, որ Ռուդոլֆանի հայր Վասակը ևղած լինի Վասակ խաղբակյանը և, որ նրա հայր խաղբակը ունեցած լինի նաև Վախտանգ կրճ-նանունը։

Ուշագրավ է արձանագրության մեջ նշված «Ձիթեննաց այգին», որի շրջորդ մասը գնելով, Ռուդոլֆանը նվիրել է վանքին։ Ամենայն հավանականությամբ «Ձիթեննացը» տեղավայրի անուն է։ Կապ չունի ձիթենու կամ ձիթապտղի հետ։ Այդ է վկայում Արզականից ոչ հեռու, Դալիլար գյուղատեղի կիսավեր եկեղեցու մի արձանագրությունը, ըստ որի Սարգիս վարդապետը կառուցել է տեղի Ս. Աստվածածին եկեղեցին և նվիրել իր «բաժին այգին ի Ձիթենիալց յ՛13»։ Այս երկու հիշատակությունները ցույց են տալիս, որ նշված տեղավայրը պետք է փնտրել Արզական գյուղի շրջակա տարածքում։

6. Վիմագիրը փորագրված է եկեղեցու հյուսիսային որմնամույթի հարավային երեսին, ունի 13 տող, պահպանվածությունը գերադանց է։

- 1 Շնորհիւն ԱՅ,
- 2 ԵՍ՝ ՍԱՐԳԻՍ, ՈՐԴԻ ԳՈ
- 3 ՇԻՆ, ՄԻԱԲԱՆԵՑԱ ՄԲ
- 4 ՈՒԽՏԻՍ ԵՒ ՏՎԻ Ի Հ
- 5 ԱԼԱԼ ԸՆԶԻՑ ԻՄ
- 6 ՈՅ .ՄԴԿ, ԵՒ Ս
- 7 ՊԱՍԱԽՈՐՔՍ Խ
- 8 ՈՍՏԱՑԱՆ :Բ: ԱԻՐ
- 9 ՊԱՏԱՐԱԳ Ի. ՏԱԻՆ
- 10 Ի ՄԲ ՍԱՐԳՍԻՆ :Ա: Ի
- 11 ՆՁ :Ա: ՄԵԼԵՔԻՆ
- 12 ԿԱՏԱՐԻԶՔՆ Ա(ԻՐ)Հ(Ն)
- 13 ԻՆ Ի ՏԷ, Ի ԹՎ :Զ: (1251) (նկ. 22)։

Արձանագրության հեղինակ Սարգիսը իր անձնական միջոցներից 50 դահեկան է նվիրում զվանքին և ստանում երկու պատարագ, մեկը՝ իրեն, մյուսը կնոջը՝ Մելեքին։ Մեծ հետաքրքրու-թյուն է ներկայացնում Գոշ անվան առկայությունը։ Ցայմ այդ անունով հայտնի էր միայն Մխի-թար Գոշը։ Արձանագրության վերջում կա մի փակագիր, որը հավանաբար փորագրող զրչի ա-նունն է։ Այն եղծված լինելու պատճառով ղժվարում է ենթ վերծանել։

7. Գրված է հարավային որմնամույթի հյուսիսային երեսին, ունի 10 տող, պահպանվածու-թյունը բավարար է, հողմահարված են 7—9-րդ տողերի միջնամասերը։ Չնայած դրան, արձա-նագրությունը լիարժեք վերծանվում է։

- 1 Շնորհիւն ԱՅ,
- 2 ԵՍ՝ ՏԻՐԱՏՈՒՐ, Ի Հ
- 3 ԱԼԱԼ ԸՆԶԻՑ
- 4 ԻՄՈՑ՝ ՏՎԻ ՄԻՆ ՓԱ
- 5 ՐՏ ԶԱՆԿԱԿՍ :ԵՃ(Ի)
- 6 (Ս)Պ: ԵՒ ՍՊԱՍԱԽՈՐՔՍ
- 7 ԽՈՍՏԱՑԱՆ Ի՝ ՏԱՐ
- 8 ԻՆ :Բ: ԱԻՐ ՊԱՏԱՐԱԳ:
- 9 ՈՎ ԽԱՓԱՆԷ ԴԱՏԻ ՏԷ,
- 10 ԹՎ ԶԼ (1281) (նկ. 23, նկ. 35)։

Արձանագրության մեջ ուշադրություն է դրվում նվիրված առարկան՝ «մին փարտ դան-դակս»։ «Փարտ» տերմինը վիմագիր արձանագրություններում շատ հազվագեպ է հանդիպում։ Այս

¹² Խաչենցի իշխանների մասին տե՛ս Բ. Ուլուբաբյան. Խաչենի իշխանությունը X—XVI դդ. Երևան, 1975։

¹³ Ս. Սմբատյանց. Տեղագիր Գեղարքունիքի ծովափարդ գավառի. Վաղարշապատ, 1895, էջ 315։

բառն ունի արաբական ծագում, որից անցել է պարսկերենին և թուրքերենին: Նշված լեզուներում այդ բառը հանդես է գալիս «Ֆարդ» ձևով և ունի բազմաթիվ բացատրություններ. 1. անհատականություն (НАДИВНАІУУМ), մարդ, 2. կենտ թիվ, կենտություն, 3. ցուցակ, գրանցման մատյան (որտեղ նշվում էին հարկատու գյուղացիների անունները և եկամտի չափը), 4. միակը, հավասարը շունեցող, սբանչելի, բարձրագույն կարգի, հատ¹⁴: Հանդիպում է նաև «Ֆարդ-Ֆարդ» բառակապակցությունը, որը թարգմանված է՝ «հատ-հատ»¹⁵:

Բառը հայերենում, հավանաբար, օգտագործվել է XIII դարից և մեր վիճագրական վկայությունը պետք է համարել կամ հնագույնը, կամ հնագույններից մեկը: Բառի հայացման ապացույցներից են մեր մի շարք բարբառներում պահպանված հիշատակությունները: Սակայն այստեղ իմաստային մեծ շեղումներ կան արաբ-պարսկականի համեմատ: Օրինակ՝ Արաբկիրը բարբառում այդ բառի տակ հասկացվել է «փոր, որոճողներու ստամոք», Չարսանհակում՝ «սողիքներ, փորոտիք»¹⁶: Իմաստային որոշակի մերձեցում է նկատվում Մարաշի, Պոլսի, Սեբաստիայի բարբառներում՝ «խոշոր կտոր»¹⁷: Հայերենի բառարաններում սույն բառը, փերթ կամ փարթ (փերտ, փարտ) ձևով բացատրված է «կտոր»¹⁸, «բաժին, մաս»¹⁹: Երևմիտ Մեղրեցու բառարանում այն թարգմանված է՝ «փառավոր»²⁰: 1325 թ. գրված Մարկոսի Ավետարանի մեկնության մեջ հեղինակը օգտագործել է «միափերդ» բառը, որը Հր. Աճառյանը բացատրում է «միակտոր, միաձուլ»²¹: Խնդրո առարկա հարցի կապակցությամբ ուշագրավ հիշատակություն է պահպանվել. դա մի նվիրատվական վկայագիր է, փորագրված Արցախի Զրիշտիկ վանքի զավթի երեսպառնման քարի վրա. «Կաման այ ես Գրիգոր, շինեցի Կուղտապատա եկեղեցին և գնեցի զաւեստարան կողումս: Բ: փերթ հող զներքին կալին երկիր տվի սբ ուխտս...»²²: «Փերթ» բառի մոտափոխություն նույնանման վկայություն է պահպանվել Մարտունու շրջանի Ներքին Գետաշեն գյուղի Կոթա Աստվածածին եկեղեցու բակի տապանաքարերից մեկի արձանագրության մեջ. այստեղ հանգուցյալը համարվում է «է փերտ գեղի տէր»²³: Քննելով առաջին վկայությունը, թերևս, հնարավոր է «փերթ» բառը բացատրել երկու կերպ՝ կամ «կտոր, մաս, բաժին» կամ հողի որակը ցույց տվող իմաստով, այն է՝ երկու լավ, հիանալի. թերևս բերքատու, նմանը շունեցող հողակտոր, այսինքն թվականը վերաբերում է ոչ թե «փերթին», այլ հողին: Կարծում ենք անսովանական չլինար է համարել նաև բառիս բացատրությունը սլավոնագույն՝ «հատ» իմաստով: «Երկու հատ հող»։ Ամենայն հավանականությամբ գյուղի կենսավիճակն է արտահայտված նաև Կոթավանքի արձանագրության մեջ, այսինքն «յոթ փարթամ, եկամտաբեր, հարուստ գյուղ»:

Արդ, ինչպե՞ս հասկանալ Գ-հուկի արձանագրական հիշատակությունը: Ընդհանրապես, այստեղ «փարտը» կարելի է մեկնաբանել մի քանի կերպ, օրինակ. Տիրատուրը վճարել է 500 արծախ՝ զրամ զանգի ձուլման համար, որը կազմում է արժեքի մի «մասը»: Սակայն դա քիչ է հավանական, քանի որ զանգի պատրաստումը դժվար թե այդչափ թանկ արժենար: Թերևս կարելի էր այստեղ նույնպես տեսնել «հատ» իմաստը, սակայն կարծում ենք, որ մեր արձանագրության մեջ նույնպես «փարտ» բառը պետք է բացատրել «հիանալի, նմանը կամ հավասարը շունեցող, փառավոր» իմաստներով, քանի որ միայն այդպիսի զանգը կարող էր այդքան թանկ արժենալ:

8. Արձանագրությունը փորագրված է եկեղեցու ներսի հարավային սյուսին, աջ կողմում: Բաղկացած է հինգ տողից: Ընդհանուր առմամբ լավ է պահպանված: Հողմահարված են երրորդ տողի վերջնամասը և չորրորդ ու հինգերորդ տողերի սկզբնամասերը, սակայն երևելով բովանդակությունից՝ հեշտությամբ վերականգնվում և մերձանվում է:

¹⁴ Персидско-русский словарь в двух томах, под редакцией Ю. А. Рубинчика. Т. 2, М., 1970, с. 227.

¹⁵ Նույն տեղում, էջ 228:

¹⁶ Հր. Աճառյան. Հայերեն զավառական բառարան. Թիֆլիս, 1915, էջ 1065:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Հր. Աճառյան. Հայերեն արձատական բառարան. հ. 4, Երևան, 1979, էջ 499:

¹⁹ Նոր բազիրը Հայկազեան լեզուի. հ. 2, Վենետիկ, 1837, էջ 941:

²⁰ Երևմիտ Մեղրեցի. Բառգիրք Հայոց, կազմեց՝ Հ. Ամալյան. Երևան, 1975, էջ 324:

²¹ Հր. Աճառյան. Հայերեն արձատական բառարան. հ. 4, էջ 499:

²² Դիվան հայ վիճագրության. սյր. 5, կազմեց՝ Ս. Գ. Բարխուդարյան. Երևան, 1982, էջ 107, արձ. 346:

²³ Դիվան հայ վիճագրության. սյր. 4, էջ 278, արձ. 1171:

- 1 ՇՆՈՐՀԻԻՆ ՔԻ, ԵՍ՝ ՊԻԶԱՐ, ՈՐԴԻ ՎԱՐԴԱՆԱ, ՄԻ
- 2 ԱՐԱՆԵՑԱ ՄԲ ԲՈՂՈՐԱԶԱՐԻՍ ԵՒ ԵՏՈՒ ԶԻՄ ՀՈԳ
- 3 Ո ԲԱԺԻՆՍ Ի ՄԲ ՈՒՆՏՍ, ԵՒ ՍՊԱՍԱԻՐՔՍ ՀԱՍՏԱՏԵ
- 4 ՅԻՆ :Բ: ԱԻՐ ՊԱՏԱՐԱԳ ԻՆՁ, ԿԱՏԱՐԻՉԳ
- 5 Ի ՏԷ: Ի ԹՎ :2:2:Դ: (1335) ԶԵՐԵՄԻԱ ԱՂԱԻԹՍ (ՅԻՇԵՑԷՔ):

Այս արձանագրության մեջ առաջին և միակ անգամ հիշատակվում է ԳՆՈՒԿի վանքի իրական անվանումը՝ Բոլորահար Անվան Բացատրությունը առայժմ դժվար է տալ, թեև բառն ինքնին բավական սխալ կառուցվածք ունի: «Բոլոր» բառից կազմված տեղանուններ Հայաստանում տարածված են ևղև: օրինակ՝ Բոլորաբար, Բոլորածոր, Բոլորաբերդ: Արձանագրությունը ուղարկվել է նաև անտեղ հանդիպող անձանց՝ Վարդանի և նրա որդի Պիլարի կապակցությամբ: Պիլար անունը հայկական աղբյուրներում միայն մեկ անգամ է հիշատակված²⁴: Դա նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի ձեռագիր Ավետարանի հիշատակարանում է, գրված 1330 թ. Զղոնա անապատում: Զեռագիրը ընդօրինակված է Կիրակոս Երզնկացի գրչի կողմից, պատվիրատուն է Վեգեն իշխանը, որը դարձել էր կրոնավոր: Քննարկվող հատվածում կարդում ենք. «Արդ այսպիսի պատուական և անգին մարգարտի բաղձացեալ իրրև զիմաստուն վաճառական մեծազարմ իշխանս Վեգեն՝ մականուն կոչեցեալ Վրթանէս, որ արհամարհաց զսնտի փափկութիւն կենցաղոյս՝ խարաղնաղգեստ եղեալ կրանատրեցաւ և շինեաց եկեղեցիք մեծապայծառ, հանդերձ եղբայրն իւրով Պիլար իշխանան, լանուն սուրբ Աստուածածին և շինեալ Լկեղեցին Դեղձանապանաց սալեցին և զմամատուն գեղեցկապէս յարինեցին...»²⁵:

Զեռագիրը գրվել է. «յանապատիս Զղանա, ընդ հովանեաւ սուրբ նշանացս»: Հիշատակարանը մանրակրկիտ ճանաչում է առել Բ. Ուլուբաբյանը: Նա գտնում է, որ նշված իշխանները սերում են Դուխան տնից, իսկ նրանց վերահիշյալ շինարարական գործունեությունը ծավալվել է Արցախի Մար զավառում: Այդ Լորակացությունների համար հիմք են ծառայել երեք հանգամանք. նախ՝ Դեղձանքը ամենայն հավանականությամբ Մար զավառում հիշատակված Դեղձանց գյուղում է եղել, երկրորդ՝ Մարում միայն մեկ Աստվածածին եկեղեցի է հիշատակված, որը կառուցել են Հովհաննես Գ եպիսկոպոսը՝ «որդի Գրիգորի և Թոն Դուխի» և Գրիգոր 11-ը՝ Հովհաննեսի որդին, երրորդ՝ իշխանները կապված են Դուխանների հետ (հիշատակարանում նշված է Դուխ անունը)²⁶:

Ուշագրավ է հիշատակարանի այն հատվածը, որտեղ ներկայացված են այս տոհմի անդամները. «Յիշեցէք և զդեռարողորջ մանուկն զՀասան, զորդի Բիշարին և զԱւլատայն»²⁷ որդի նորա և զբոլր պարոնացս (Վեգեն-Վրթանեսի և Պիլարի—Գ. Ս.)՝ զնորիշահ և զզլուփ նորա՝ զպարոն Զէսան՝ ամենայն դաւակաւք և զմիւս բոլրն՝ զՎախախ²⁸ ամենայն ընտանեաւք և

²⁴ Բագնայրի արձանագրություններից մեկում հիշատակված է «Պիլարենց հյուրատանը» (Ղ. Աւիշան. Շիրակ. Վենետիկ, 1881, էջ 120):

²⁵ Ժ. Գարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Լ. Ս. Խաչիկյան. Երևան, 1950, էջ 224:


²⁶ Բ. Ուլուբաբյան. Նշվ աշխ., էջ 324, ծան. 120:

²⁷ Այս անձնանունը առաջին անգամ է հանդիպում և առայժմ միայն է: Հավանական է պարսկական կամ թուրքական ծագում ունի և առաջացել է «ալատ», էվլետ» բառից, որը նշանակում է որդի, զավակ (Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր. սր 1, կազմեց՝ Հար. Աբրահամյան. Երևան, 1941, էջ 115, 135): Մինչև վերջերս էլ որոշ բառարաններում օգտագործվում էր «ավլադ» բառը, բայց «ազդատոհմ, ընտանիք» իմաստներով:

²⁸ Վիմագրադեա Գր. Գրիգորյանը այս Վախախին համարում է Բուրթել Օրբելյանի կինը (տե՛ս նրա «Սյունիքը Օրբելյանների օրոք» աշխատությունը. Երևան, 1981, էջ 140): Ընդհանրապես չբացատրելով այս կարծիքը, գտնում ենք, որ բավարար հիմքեր չկան դրա համար: Ըստ երևույթին Գրիգորյանը եկել է այս համոզման, հենվելով միայն երկու փաստի վրա. նախ, որ Վախախը եղակի հանդիպող անձնանուններից է և երկրորդ, որ Պիլարի մյուս բուլր խորիշահը

զմայր պարոնացս զԴավի և զԹաղթանի՝ զուգակից Պիշարին։ Այլ և զծնողսն Վեգենա՝ զպարոն Վարդան և զՄահան յիշել աղաչեմ՝ զփոփոխեալսն առ Քրիստոս և զհանիկն՝ զՎախախ ղսնուցանալ զպարոնացս և զյոյժ երախտաւոր՝ զմայր Վարդանա և զհանիկ սոցա...»²⁹։

Բ. Ուլուբաբյանը հիշատակարանի հաղորդած տեղեկությունների հիման վրա ներկայացնում է Վեգենի և Պիշարի ազգատոհմը³⁰։



Այնուհետև հեղինակը նշում է, որ «թերևս այստեղ (իմա՝ հիշատակարանում--Գ. Ս.) հիշատակվող հանիկ (տատիկ) Վախախ հենց Դոփի հարսն է եղել, բայց ոչ Գրիգոր Ա. Իշխանի կինը, քանի որ հայտնի է Գրիգորի կնոջ Մամքան անունը»³¹ ու ավելացնում, որ Հասան I-ը և Դոփի բացի աղբյուրներից հայտնի դավակներից «ունեցել են նաև մի այլ արու զավակ, որի կինն է եղել Վախախը»³²։

Հիշատակարանում Վեգենի և Պիշարի ծնողների հարցում հակասություններ կան։ Նախ գրված է «զմայր պարոնացս զԴավի», իսկ դրանից անմիջապես հետո՝ «զծնողսն Վեգենա՝ զպարոն Վարդան և զՄահան յիշել աղաչեմ՝ զփոփոխեալսն առ Քրիստոս»։ Մի դեպքում մայր է հիշատակված Դոփը, մյուսում՝ Մահանը։ Այս հարցում կարծում ենք կարևոր վկայություն է պարունակում Չեսար Օրբելյանի մի արձանագրությունը՝ փորագրված Սելիմի քարավանատան իտքը դահլիճի արևելյան կիսամասում պատի վրա։ Այնտեղ կարդում ենք «...ես Չեսար... եւ կենակից իմ Խորիշահ, դուստր իշխանին Վարդան[ն]ա եւ Դոփին քր ...րեն յաղէս Սենիքերիմա»³³։

Արձանագրության մեջ հստակ նշված են Խորիշահի ծնողները՝ Վարդանը և Դոփը ու կասկածների հիմքեր չեն տալիս։ Վիճաբարի այդ հատվածի վերծանությունը նույնպես լիարժեք է։

Այս իրողությունը առավել հստակորեն վկայված է Չեսարի նույն արձանագրության արաբատառ-պարսկերեն տարբերակում. «...մեծագործ բարերարն Չեսար որդի Ծնարիտի (կիպարտի) որդուց Իւան[է] ի (եւ կին նորա) Տուրշահ (Խորիշահ) դուստր Վարդանայ եւ Թիւփի

հարս էր գնացել Օրբելյանների տունը, դառնալով Չեսար Օրբելյանի կինը։ Կարծում ենք, որ այս փաստերը բավարար չեն Պիշարի քույր Վախախին Բուրթել Օրբելյանի կինը համարելու։ Եվ վերջապես, եթե իրոք այս Վախախը լինել Բուրթելի կինը, ապա վերջինիս անունը անպայման, ինչպես Չեսարինը, կնշվեր հիշատակարանում, քանի որ Բուրթելը ամուսնացել էր դեռևս XIV դարի 10-ական թթ.։

²⁹ ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 224։

³⁰ Բ. Ուլուբաբյան. նշվ աղբ., էջ 325։ Մենք գծագրում ենք նշված իշխանների տոհմաժառը համաձայն հեղինակի տվյալների։

³¹ Նույն տեղում, էջ 325։

³² Նույն տեղում։

³³ Դիվան հայ վիճագրության. պր. 3, էջ 177—178, արձ. 545։

(Գալիի)...³⁴ Դոփը հիշատակված է ոչ թե որպես Վարդանի կողակից, այլ՝ նախնի³⁵ Նրա հիմնական կովանք այս հարցում Դոփ անվան եզակիությունն է։

Վերոբերյալ մատենագրական և վիճաբանական վկայությունները մեզ թույլ են տալիս հանգել այն եզրակացության, որ հիշատակարանում նշված Դոփը Զաքարյան Սարգսի դուստրը չէ, այլ նույնանուն հետնորդներից, թերևս թոռը։ Հիշատակարանում տեղ գտած այս հակասությունը, թերևս դուրի անտեղյակության կամ շփոթի արդյունք է։

Այժմ ցանկանում ենք ուշադրություն հրավիրել մի հետաքրքիր երևույթի վրա. դա վանքում նվիրատվությունների դիմաց տրվող պատարագների արժեքի խիստ կայունությունն է³⁶։ Ուսումնասիրվող արձանագրություններում դրամական միավորները ներկայացված են և՛ դահեկանով, և՛ սպիտակով։ Հաշվի առնելով Ստեփանոս Օրբելյանի հաղորդած տեղեկությունը իր ժամանակի դրամական միավորների մասին, իստ որի մեկ դահեկանը հավասար էր 10 սպիտակի, կարող ենք վստահորեն ասել, որ մեր վիճաբանում ևս դահեկանի և սպիտակի հարաբերությունը նույնն է եղել, իսկ որ ժամանակաշրջանը համարյա նույնն է (XIII—XIV դդ.)։ Ըստ Մխիթար Գոշի մեկ դահեկանը համապատասխանել է 12 սպիտակի³⁷, այսինքն վանքում եղել է պատարագների մեկ միասնական սակագին. մեկ պատարագի արժեքը կազմել է 25 դահեկան կամ 250 սպիտակ։

Գնուկ-Բոլորահարի վանքի արձանագրությունները մեծ նշանակություն ունեն ոչ միայն հուշարձանի պատմությունը վեր հանելու, այլև ժամանակի սոցիալ-տնտեսական, դրամական ու հողային հարաբերությունների, ինչպիսի նաև մշակութային կյանքի ուսումնասիրման տեսակետից։

* * *

Ի դեպ, անհրաժեշտ ենք համարում «Պատմա-բանասիրական հանդեսի» ընթերցողների ուշադրությունը հրավիրել հետևյալ փաստի վրա. 1979—82 թթ. մենք ԳԱ հնադիտության ինստիտուտի պլանի համաձայն պիղումներ ենք կատարել Նաիրիի շրջանի Բուժական գյուղի տարածքում գտնվող Թեղեկաց վանքում, որի ընթացքում հայտնաբերվել են Կաթողիկե եկեղեցին, ենթադրյալ գրապահոց-դրատունը, ինչպես նաև մի շարք անհայտ արձանագրություններ։ Այս բոլորի մասին մենք մասնավոր խոսակցության ժամանակ պատմել ենք Նիգ դավառի (ներկայիս Ապարանի շրջան) պատմության հարցերով զբաղվող Վ. Պետրոսյանցին, որը, սակայն, առանց մեր է ինստիտուտի համաձայնության այդ նորահայտ նյութերը հրապարակել է իր «Թեղեկաց վանքը իբրև մշակութային կենտրոն» հոդվածում (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1982, N 1), կոպիտ կերպով խախտելով գիտական աշխատանքի հրապարակման տարրական սկզբունքները։

34 Ս. Բ ար խ ու դ ար չ ա ն. Խորհրդային Հայաստանի հնագիտական հուշարձանները, Երևան, 1937, էջ 90։

35 Բ. Ու լ ու բ ա բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 326։

36 Այստեղ նկատի են առնված նաև հոգվածում տեղ չգտած արձանագրությունների տրվյալները։

37 Ի. Ա վ դ ա լ բ ե կ յ ա ն. Մի գաղտնիք վիճագիր արձանագրությունների մեջ.—Հայագիտական ուսումնասիրություններ. Երևան, 1969, էջ 312։